Պարույր Սևակ

Մեծ ուղտի փոքրիկ ականջում

Ի՜նչ-որ ժամանակ,
Մեզանից առա՛ջ, մեզ անհա՛յտ մարդիկ
Նստել-մտածել ու հորինել են զանազան բաներ.
Այս մեկը՝ անե՛լ,
Այն մեկը՝ չանե՛լ,
Այս՝ համարել ճի՛շտ,
Այն՝ մերժել-վանե՛լ,-
Սահմանել ինչ-որ հերթականություն,
Կոչել պատիվ ու... պարտականություն...
Ու մենք էլ ահա անցնում ենք հանգիստ
Անհեթեթությանց այս թանգարանով,
Եվ ծվատում ենք ո՛չ մեր հագուստը,
Այլ հոգի՜ն մեր խեղճ,
Որի հատակում
Կա անտանելի նույնպիսի մի բան,
Ինչպես ավազը՝ մեր կոշիկի մեջ,
Ինչպես սուր փուշը՝ մեր եղունգի տակ:
Եվ անց է կենում
Երգապնակի շրջագծային խազի վրայով
Ասեղը կյանքի՝
Կորզելով միշտ նո՛ւյն

Ու մի՜շտ տանջալից ա՛յն եղանակը,
Որ վաղո՜ւց արդեն անհեղինակ է,
Բայց համարվում է
Անառարկելի հեղինակություն...
Եվ մի արտառո՛ց,
Շատ տարօրինա՛կ ու տա՜ք ցանկություն
Հալածում է ինձ
Ու հետապնդում օրը ցերեկով.
Ես կամենում եմ (և ձե՜ր փոխարեն)
Ո՛չ թե լոկ մոռալ կամ թե գոմռալ,
Այլ գազանի պես մոնչա՜լ ազդու՝
Մոռթքս դրած այս քարի՞ն արդյոք,
Թե՞ այս նորաձև կլոր սեղանին:
Ու չե՛մ կարեկցում... արհամարհո՜ւմ եմ
Ա՛յն թշվառական կենդանիներին,
Որոնք «ընտանի» պիտակն են կրում,
Իրենց կարծիքով՝ իբրև ուսադիր,
Իսկ իմ կարծիքով՝
Իբրև խոր խարան խայտառակության:
Դուք նախընտրում եք վիթխարի ուղտի՞ն:
Իսկ ես լրջորեն նախապատվում եմ
Նույնիսկ մկա՛նը, առնետի՜ն անգամ,
Որոնք ընտանի չեն դարձել ցայսօր...
Ու երբ քնի մեջ մղձավանջային
Ձեզ առնետները կրծոտեն սիրով,
Դուք՝ արթնանալով՝ մի պահ մտածեք,
Թե արժի՞ արդյոք դարեր շարունակ
Քնել մե՜ծ ուղտի փոքրի՛կ ականջում...

14,20.XI.1963թ.

Երևան